սկսեալ և բաղում բանս ասացեալ նորա և զգործեցեալ չարիսն. և նա կայր յոտս նորա գլուխ ի բաց Մեղա՛յ ասելով։ Եւ յետ բաղում աղաչանաց ժողովրդեանն որ կային անդ ի մեծամեծացն և ոչ ի փոքունցն, մինչև Լ արանց, և ապա ել Վարդապետն և ասաց զՈղորմեսցին։ Երեկոյիս դաս ասաց ի ժամն։

Թ-ին օր Կիրակի Տնտեսի. Վարդապետն դաս ասաց և դաս քաշեց զայնպիսիսն որք գնացին պօստանձիպաշուն, և զԷսիլի Թոռն, ևս Նորա քահանայ ասողն այսպէս և այնպէս լինի, և այլ բաղում բան՝ որք զայս աղմուկս յառաջեցուցին։

Բ-ի (10 Մարտ). տարան զՎարդապետն ի յԱստուածածին։

Գ-ի (11 Մարտ). Տէր Ոհաննէսն և փոքր տղան ի Պուրսաու (եկին)։ Եւ օրս մեր Պողոսի տղան եկաւ յԱպահանայ։ Օրերքս Էսիլի Թոռի ժողովուրդն եկեալ ի մի տեղ վասն չընդունելոյ զնա երիցութեան։

Դ-ի (12 Մարտ). ձիւն եկաւ։

Ե-ի (13 Մարտ). բացվաւ. լոտոս էր։

Ուրբաթ (14 Մարտ). կէս աւուրս անձրև եկաւ. և օրս Ա. Բ գող կ'երթան կու կոխեն Ա. պառաւի մի տուն, ինչ որ ունի զամէնն կու յափշտակեն և տեղն ամօտ կու լինի զուլլուխին, կու խմացուի Աստուածով և չօրպաճի զուլլուխին կու հասնի ի վերայ մինչդեռ ի տանն են, ըմբռնեալ զնոսա տանի ի վէզիրն զերկոսին գողն եւ զպառաւն ի վերայ ձիոյ դնեն, քանզի անկար էր ի քայլելն. և վէզիրն տեսեալ զայն խիլայեաց զչօրպաճին և զգողն ետ դահճացն զի տարեալ զնոսա ի յԱթմէյտանն, զձեռան և զոտն կոտորեաց, եւ օրս ցուրտ էր, սատակեալ կորեան ի կորուստն յաւիտենից։

Շաբաթ (15 Մարտ) բաց էր. եւ մեր Եաղուպի աղբարն մեռաւ և Խոճա Ղազարին աներն ևս։ Ի դէմ